“InYous”-ի երկրորդ փուլը տեղի ունեցավ Վրաստանում

Հուլիսի 22–29-ընկած ժամանակահատվածում, «Երիտասարդական ակումբների դաշնության» (FYCA) նախաձեռնությամբ և Եվրամիության Erasmus+ ծրագրի աջակցությամբ իրականացվող International Youth Studies («Միջազգային երիտասարդական հետազոտություններ», InYouS) երկարաժամկետ ծրագրի շրջանակում Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում տեղի է ունեցել HTML (How to Make Lessons for Youth Workers, «Ինչպես ստեղծել դասընթացներ երիտասարդական աշխատողների համար») դասընթաց-ծրագիրը:

Ծրագրի նպատակն էր զարգացնել երիտասարդական աշխատողների հմտությունները, ուսումնասիրել երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությունը, ծանոթալ ոչ-ֆորմալ կրթության առանձնահատկություններին և գտնել երիտասարդական աշխատանքի ճանաչմանը նպաստող ուղիները:

Ծրագրին մասնակցում էին նաև Հյուսիսային համալսարանի արտաքին կապերի բաժնի աշխատակցուհի Նելլի Ավագյանը և տնտեսագիտության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Արմեն Ճուղուրյանը, ով երկու ինտերակտիվ դասընթաց վարեց մասնակիցներ համար:

Դասընթացի ընթացքում կարևորվել է նաև թիմային աշխատանքը, որի միջոցով մասնակիցները զարգացրել են հաղորդակցման, բանակցելու, վերլուծելու և մի շարք այլ հմտություններ:

Ծրագրի կարևոր մասերից մեկը ավելի քան տասը երկրների մասնակիցների կողմից իրականացված միջմշակութային երեկոն էր, որի ընթացքում

ներկայացվեցին ազգային պարեր, խոհանոց և հետաքրքիր փաստեր յուրաքանչյուր երկրի մասին:

Մասնակիցները նաև այցելեցին երկու երիտասարդական կենտրոն Վրաստանում և ծանոթացան վերջիններիս գործունեությանը:

Ծրագրի երրորդ փուլը այժմ ընթանում է Չեխիայում, որտեղ մասնակիցները գործնականում կփորձեն կիրառել նախորդ 2 փուլերի ընթացքում ստացված գիտելիքները: